

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄԵԼԻ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ՍԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խմբագրութիւնը տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՎԵՏԱՀԱՐ ՈՍԿԻ և ՆԵՐՍԷՍ ՍԱՐԴՈՒՄԵՆՆԵՐԸ

յայտնում են խորին շնորհակալութիւն այն պէս. եպիսկոպոսներին, վարդապետներին, քահանայներին և առհասարակ այն ամէն տիկիներին, օրիորդներին և պարոններին, որոնք հաճեցան ցաւակցութիւն ցոյց տալ թէ անձամբ և թէ հեռաւոր քաղաքներից հեռագրերով և նամակներով, իրանց հինգ հաւ անմեղ Աստուծոյ յիշատակը յարգելու համար:

Հաջի-Մայր Յովհաննան, Գայեանէ Մելքոնեան Յովհաննան իր գաւազնի-
րով և հարսներով, Ստեփան, Յովակիմ և Արտաշէս Յովհաննանները և Հոսիֆիմէ
Մարգարեանը ցաւօք սրտի յայտնում են իրանց բարեկամներին, ազգականներին և
ծանօթներին, առաջին իր սիրելի որդու, երկրորդ իր անմոռանալի ամուսնու և
վերջինները իրանց մեծ եղբոր:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆԻ

մահւան մասին և խնդրում են շնորհ բերել յուզարկաւորութեանը, որը բաժնի
25-ին, առաւօտեան 10¹/₂ ժամին Դէօրգեվսկի հրապարակ, տուն Արտաշէսի, բնա-
կարան Արշակ քահ. Մինասեանի, դէպի Աւետեաց ս. Աստուածածնի (Ջգրաշէն) եկե-
ղեցին, իսկ թաղումը Սոջիվանքում: Ամբողջը հինգշաբթի, երեկոյան ժամի 7-ին:

Արշակ քահանայ Թադէոսեան և տիրուհի Սօֆիա Յովհաննիսեան Մինասեանները
իրանց գաւազնիքով ցաւօք սրտի յայտնում են բաժնիկներին և ծանօթներին առա-
ջինը իր աներոջ, իսկ երկրորդը իր անմոռանալի հօր:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆԻ

մահւ: Խնդրում են շնորհ բերել յուզարկաւորութեանը, որը լինելու է ամսին 25 ին
առաւօտեան ժամի 10¹/₂ ին, Դէօրգեվսկի հրապարակ, տուն Արտաշէսի, բնակարան
Արշակ քահ. Մինասեանի, դէպի Աւետեաց ս. Աստուածածնի (Ջգրաշէն) եկեղեցին,
իսկ թաղումը Սոջիվանքում: Ամբողջը հինգշաբթի, երեկոյան ժամի 7-ին:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Հայ պատգամաւորութեան հաղորդագրու-
թիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասեան
գիւղատնտեսական ընկերութեան մէջ. Բա-
թումի կեանքից. Նամակներ խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—ՅԱՅ.
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒ- ԹԻՒՆԸ

Վեհափառ Կաթողիկոսի հրամանով,
ինչպէս յայտնի է, յունվարի սկզբին Պե-
տերբուրգ ուղևորվեց մի յատուկ պատ-
գամաւորութիւն՝ ներկայանալու կառա-
վարչական անձանց հայկական եկեղեցու
գործերի վերաբերութեամբ: Պատգամա-
ւորութեան անդամներն են Ներսէս արք-
եպիսկոպոս Խուզաժիբեան և Մեսրոպ
վարդապետ Տէր-Սովսիսեան:

Պատգամաւորութիւնը զանազան ժա-
մանակներում ներկայացել է Մեծ Իշխան
Վլադիմիր Ալեքսանդրովիչին, ներքին
գործերի մինիստր Բուկիբինին, կովկա-
սեան փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկո-
վին, մինիստրների կոմիտէի նախագահ
Վիտտին, Բարոն Բուրգերդին և ուրիշ
պետական ազգեցիկ անձանց: Մենք հա-
մառում տեղեկութիւններ տուել էինք այդ
այցելութիւնները մասին մեր լրագրում
իր ժամանակին:

Այժմ անհրաժեշտ ենք հատարում հա-
ղորդել մեր ընթերցողին վերջին ստոյգ
տեղեկութիւնը, որ մենք ստացանք երէկ,
մարտի 23-ին, Պետերբուրգից, պատգա-
մաւորութեան անգամ Մեսրոպ վարդա-
պետից: Նա հեռագրում է հետեւելով.

«Այսօր (մարտի 22-ին) մենք ներկա-
յացանք կովկասեան փոխարքային: Ըն-
դունելութիւնը շատ սիրալիկ էր: Յու-
նիսի 12-ի պօլօթեմիան կը վերադննդի,
աւստրիական հոգեւորականները հարցը կը
վերադննդի և ըստ կարելոյն նրանք կը
վերադարձնեն և զարոցական հարցը կը
կարգաւորվի»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

Մեր պատմութեան մէջ բոլոր նշանաւոր,
նուիրական անունները համարեալ լոկ անուն-
ներ են միայն: Թէև փոքր ազգ ենք և յաճախ
ուրիշների տիրապետութեան տակ, ասում է
Խորենացին—բայց մեր աշխարհում էլ առա-
քիւնութեան գործեր են կատարվել: Կատար-
վել են, այո: Բայց կատարվել են անուններն
են մնացել մեզ, մինչդեռ հրքան կը կամեա-
յինք, որ նրանց կեանքի հանգամանքներն էլ
իմանայինք: Զը կան այդ հանգամանքները,
նրանք կորած են անյայտութեան խաւարի
մէջ:

Այլոք անցիալը թողնենք: Շատ բան գի-
տենք մեր թաւմ, եթէ կարելի է ասել երի-
տասնորդ անցիալի գործիչների կեանքից: Գա-
մառ Քաթիկոս իր առաջին ոտանավորների
մէջէլ մէջ ասում էր.

Միթէ այնքան անգութ է լինի Լեոնա գիտ
Որ անունը անգամ կան է նա անհետ...

Անունը—հէ: Լոկ անունը: Բայց անուն
հետ կապված կեանքը կ'անելու, անհետացնե-
լու համար Լեոնա գիտի անքան կան մեղա-
նում:

Միւրում ենք մեր նշանաւոր գործիչներին:
Բայց ճանաչում ենք նրանց: Մի քանի բան
գիտենք նրանց մասին, այնքան, որքան հա-
րկաւոր է մի պաշտօնական «ցուցակ» ծառայու-
թեան» կազմելու համար. ծնվեց այս ինչ տեղ,
այս ինչ ժամանակ, կրթութիւն ստացաւ, մե-
ռաւ և այլն: Սա էլ, անշուշտ, մի կեանք է,
բայց կեանք՝ առանց ներքին բովանդակու-
թեան, առանց այն յոյզերի, ձգտումների, ե-
րազների, առանց այն տանջանքների, որոնք
այնքան նուիրական են դարձրել այդ մարդ-
կանց:

Սակայն վերջերս կարծէք սկսում ենք կա-
մաց կամաց բարեխղճութիւն ցոյց տալ դէպի
մեր երախտաւոր գործիչների յիշատակը: Վեր-
ջին տարիներս մեր ամսագրական մամուլի մէջ
հաստատ տեղ է բռնում հոլմ նիւթերի հա-
տարակութիւնը, տպվում են գործիչների նա-
մակագրութիւնները: Եւ միանգամայն փոխ-
վում է պատկերը: Այժմ մենք անհամաձայն
շատ տեղեկութիւններ ունենք Արտաշէսի,
Նազարեանի, Նալբանդեանի մասին, բան
մի 10 տարի առաջ:

Անձանօթ էր մնում 50-ական թւականները

ամենախոշոր գրական գործիչներից մէկը, նա,
որի գրչի տակից դուրս է եկել անմահ «Մայր
Արարի»-ն—Գամառ Քաթիկոս: Այդ մեծ
գէթը մինչև այժմ իր արժանաւոր տեղը
չունէր մեր գրական վերածնութեան պատ-
մութեան մէջ, որովհետև ծածկված էր ժողովու-
րդի հետ մի քանի հատ կցկտուր, շատ բան
չառող տեղեկութիւններ կային նրա մասին:
Բայց ահա նա էլ դուրս է գալիս լոյս մէջ,
նա էլ գալիս է պատմելու իր օրերն ու գոր-
ծերը: «Մուրճ» ամսագրի վերջին համարից
սկսեցին տպագրվել նրա նամակները:

Իրանք գրական խնդրագին նիւթեր են:
Հրապարակախօս-բանաստեղծի ոգին բմբռնում,
նրա ժամանակը հասկանալու, նրան դիմաւոր-
ող սկզբունքները և պաշտամունքները շօշա-
փելու համար այդ նամակները կը դառնան
վերին աստիճանի հետաքրքրական դիմաւոր-
ներ: Նրա հայրենասիրական երգերը, նրա
դառն, կծու երգիծանքը վերլուծել, լուսաբա-
նել կարելի է այդ նամակների միջոցով:

Բայց Գամառ Քաթիկոս միայն իբրև ազ-
գային անմահ բանաստեղծ չէ տեղ գրաւում
մեր նորագոյն պատմութեան մէջ: Գամառ-
Քաթիկոս լինելով, նա Ռափայէլ Պատկա-
նեան էլ է, թարգմանիչ, հրատարակիչ, խմբա-
գիր, տպարանատէր: Եւ ամենազինաւոր—
ուսանող:

Եղբէլ է մի այլ հայ ուսանող, որ Ռափայէլ
Պատկանեանի պէս կուշտութեամբ գրական
տեսչանքներով այրված լինի այնքան սարսա-
փելի պայմանների մէջ: Նա գրել է երկու
վէպ ուսանողական կեանքից: Եւ այդ վէպերի
ամբողջ գործը այն անմահ նկարագրութիւն-
ներն են, որոնց մէջ աղքատ, հացի կարօտ
ուսանողի կեանքն է պատկերացած: Նկարա-
գրական այդ գոհարները դուր չեն այնքան
բնական, ազդու. ինքը, Ռափայէլ Պատկանեանը,
իր սեփական կաշու վրա փորձել է այդ բոլոր
նիւթական գրկանքները, այդ ամբողջ աղքա-
տութիւնը, որ, սակայն, յուսահատութիւն
ու լալիանութիւն չէր հաղորդում ուսանողին,
այլ դուրսէլ արհամարհանք, ստոյգիկան կո-
րով, որ թոյլ էր տալիս ոչ միայն տանել
չքաւորութիւնը, այլ և զարգանալ նրանց
իդէալապաշտութեան առողջ, նախանձելի ծի-
ծաղներով...

Եւ այդ աստիճան չբաւար ուսանողը ամ-
բողջովին հասարակութեան է նուիրված: Կօ-
պէկները օգնութիւն նա իր ազդուութիւն
համար չէ ուղղւում, այլ իր գրքերի, իր հրատա-
րակութիւնների համար: Յիսունական թա-
կաններին Պետերբուրգում կար գրական մի
ֆիրմա «Գամառ-Քաթիկոս» անունով: Նա
հրատարակեց առաջին ճոխ երգարանը նոտա-
ներով, հրատարակեց մի շարք տետրակներ
«Գամառ Քաթիկոսի» արձակ և չափաբերական
Աշխատութիւնները» վերնագրով, մի ժողով-
վածու, ուր յօդուածները չունէին ստորա-
գրութիւններ և ուր առաջին անգամ տպվեցին
Ռափայէլ Պատկանեանի բանաստեղծական
գրութիւն-գործոցները:

Ինչպէս յայտնի է, այդ ֆիրման կազմված
էր երեք հոգուց. ինքը, Ռափայէլը, Դէօրգե-
վսկեան և Մ. Թեմուրեան: Վերջին եր-
կուսը գտնվում էին Մոսկվայում, նրանք
միայն աշխատակից էին, զլխաւոր գործողը,
հոգին, Պատկանեանն էր: Դիմել էր հայ հասա-
րակութիւնը թէ ինչ տանջանքներով են տը-
պարանից լոյս հանվում այդ հրատարակու-
թիւնները: Իմանալու համար պէտք է կարգալ
Պատկանեանի նամակները, որոնք այժմ են
միայն լոյս տեսնում: Նամակները ուղղված
են այդ երկու ընկերներին և նրանց մէջ
միանման ազդակ է բարձրանում—փող չը
կայ:

Զը կայ, բայց ինչ ծրագիրներ, որքան ու-
գեւորութիւն, աշխատելու ինչ անապին պատ-
րաստականութիւն...

Հայրենի տիւրը պատկեր: Նա մի աւելորդ
անգամ ցաւեցնում, տանջում է այդ ուսանու-
ղական նամակների միջոց:

Ինչ զգացմունքներ և ինչ իրականութիւն:

Նշանաւոր է 1855-ի սեպտեմբերի 7-ից
գրված նամակը, ուր Ռափայէլ Պատկանեանը
իր գրական դաւանանքն է պարզում, մի դա-
ւանանք, առանց որի չէր կարող Գամառ Քա-
թիկոս լինել: Խոսելով «Գամառ-Քաթիկոս»
տետրակների մասին, նա ասում է:

Նորա կարգացողները թող չի դռնեն մէջը այնպի-
սի հատուածներ, որոնք կարող են պատճառ լինել
հային անդորր կենցաղ սիրող լինել. թող չի անեն
նոցա կրօնասէր քրիստոնէայ, զաւակասէր կամ ըն-
տանքասէր ծնող, այլ ամեն մի դորա մէջ պարունա-
կած յօդուածը թող կարողանայ արծաթել նոցա
սրտի մէջ եթէ ոչ ուղղակի կերպով հայրենասիրու-
թիւնը, դոնէ թող յիշենքն սոցա նոցա կարգած
երջանկութիւնը, թող կամաց կամաց սովորի պաղա-
րին նայել այն մահուան վրայ, որ նա կարող է
ստանալ, զոհելով անձը ազդի ազատութեանը... մէկ
խօսքով այն ամեն զգացմունքները, որոնք խոր
տպաւորուել են մեր մէջ, որ մենք չենք համարձա-
կվում հրապարակաւ քարոզել և որն որ հային ըստ
մեծի մասին անյայտ է, թող անգամ կերպով սեր-
մանուի նոցա սրտի և հոգւոյ մէջ:

Սա մի ամբողջ յայտնութիւն է, որի մէջ
գտնում ենք այն ուղղութեան սաղմնային
կերպարանքը, որ այնքան անապին դեր կա-
տարեց և շարունակում է կատարել ուսա-
հայոց գրականութեան մէջ:

Ռափայէլ Պատկանեանը այդ ուղղութեան
ոչ միայն ամենախոշոր, ամենախոշոր ներ-
կայացուցիչներից մէկն է, այլ և, ինչպէս
տեսնում ենք, նրա սկզբնաւորողներից մէկը:

Ինչ կանգ անենք այս շատ կարևոր կէտի
վրա:

Լ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒԴԱՍՏԵՍԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ- ԹԵԱՆ ՄԵՋ

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերու-
թեան նիստը, որ տեղի ունեցաւ երեքշաբթի,
մարտի 22-ին, գրաւել էր հիւրերի անսովոր
մեծ բազմութիւն: Այդ նիստին կարգաւորեց Վ.
Բլաշկին: Գիւղատնտեսական պետական բարեկար-
գութեան գործի մասին: Զեկուցանողը համա-
ռօտ աղետակ գցելով ընկերութեան կէս դա-
րեայ գործունէութեան վրա, յայտնեց այն
միտքը, թէ ընկերութեան գործունէութիւնը
չէր կարող բեղմնաւոր և արդիւնաւէտ լինել
շնորհիւ այն բերօքաբարեկամ կազմի, որ
բերեց պետութիւնը իր ներկայ ճգնաժամին:
Զեկուցանողը հասունացած է համարում Ռու-
սաստանի համար հիմնադրական ժողով գու-
մարիւր ընդհանուր գաղտնիք ընկերութեան
հիման վրա: Իսկ նախօրեք կարեւոր է գտնում
հրատարակել խօսքի, մամուլի, ժողովների ա-
զատութիւն: Այնուհետեւ նա նպատակաւոր-
աբ է ճանաչում Անդրկովկասում հատառեղ
տեղական ինքնավարութիւն երկրի ներկայա-
ցուցիչների ժողովին:

Ընկերութեան անգամները և հիւրերը հա-
մակութեամբ վերաբերվելով զեկուցման եզ-
րակացութիւններին, ներկայացրին իրանց
կողմից մի շարք բացատրութիւններ: Ա. Ե-
ւանդուլով առաջարկեց, որ ընկերութեան ու-
րոշումները հեռագրով յայտնվեն մայրաքաղա-
քի բոլոր լրագրիչներին: Ա. Բալանթար ման-
րամասնօրէն բացատրեց այն գործնական
հանգամանքը, որոնք անհրաժեշտ են դարձրել
երկրի և նրա ժողովրդի համար արժատեղան
բարեփոխութիւնները. գիւղատնտեսութեան
ազատ զարգացումը, գիւղացու աշխատանքի
և կեանքի բարելաւումը պահանջում են ընդ-
հանուր պայմանների բարեփոխութիւն: Փի-
րալեան յայտնեց, որ հերթական է դար-
ձել հողային հարցը: Մասնական համա-
ձայնութիւն յայտնելով զեկուցման կէտե-
րին, նպատակաւորաբար ճանաչեց տեղական
ինքնավարութեան հարցը յետաձգել, մանրա-
մասն մշակել և ապա ներկայացնել ընդհանուր
ժողովին:

Նիստը որոշեց ուղարկել Պետերբուրգ յա-
տուկ պատգամաւոր, իսկ վերջին ընտրու-
թիւնը յանձնել ընկերութեան խորհրդին:

նիւնքն: Ի մարդիկ պատասխանեցին, որ ջրհեղեղով պատելով Ռուսաստանին:

ՀԱՅՍՏԱՆԻ ՊԱՐԼԱՄԱՆԱՆԻ ՆԵՐԿԱՅՈՒՆ
Գրեց միջխորհրդակցական յայտարարութիւն, որի մէջ ասված է, թէ նոր կարգին տուր շարունակելու է Զեյթունի միջխորհրդակցական ներքին և արտաքին քաղաքականութիւնը: Այս մատնանք է արված, թէ անհրաժեշտ է ապագայում զօրքի և նաւատորմի ծախսերը աւելացնել խաղաղութիւնը ապահովելու նպատակով:

ՊԱՐԼԱՄԱՆ: Միջխորհրդակցական ընկերային հարցերը, որոնք վերաբերում են Մարոկկոյին: Լրագիրներին ոչ մի տեղեկութիւն չէ տրված. բայց և այնպէս «Պարլամենտ» հաւատարմութիւն է, թէ նրան յայտնի է, որ Մարոկկոյի հարցում Ֆրանսիային կողմնակից կը լինեն բոլոր պետութիւնները, նոյն իսկ Գերմանիան. այդ պատճառով Ֆրանսիան վճռել է շարունակել Մարոկկոյի քաղաքականութիւնը գործը և բաց դռները քաղաքականութեան սկզբունքին հետեւել աւելարճի բոլոր պետութիւններին վերաբերմամբ: Պարլամենտը թիւրքական դեսպանութիւնը հեղքում է սուլթանի հիւանդութեան լուրը:

ԿԱՆԿԱՆ: Սուրբ ծովախորշում կանգնած կը բռնկւեն բրնձի և ստացել պարտատիւնը մարդկանց ափ իջնելու համար: Ազգաբնակչութեան խլրտումը շարունակվում է: Պատանդութիւնները ժամանակ երկվայ ընտրութիւնները միջոցին ապստամբներից չորս հոգի վերաւորվել են: Կանդիայի բազմամարդ ժողովում որոշված է համակրութիւն յայտնել Տէրխասի ապստամբներին, յայտարարելով, թէ Կրէտէ կղզին պահանջում է միանալ Յունաստանին հետ:

Կ. ՊՈԼԻՍ: Ստացված է հերքումն այն լուրերի, թէ արաբները վերցրել են Սանը: Բիզանտիական ապրում է Սանում:

ՊԵՐՍԻԱ: Վախճանվեց Ֆալիէ եպիսկոպոսը: Բեմիւն: Վերջին կայսրը յունական թագաւորի հետ կը տեսնուի մարտի 23-ին, Կորֆու կղզու վրա:

ՇԱՆԽԱՅ: Կայիւնի երազանական պահակազօրքի մի մասը մարտի 20-ին յարձակում գործեց Ալեքսանդրի վրա, որ գտնվում է Կայիւնի 35 մղոն դէպի հիւսիս արեւելք և ուսանելին ստիպեց մարտի այդ կէտը:

ԼՕՆԴՕՆ: «Մասնագրութիւն» թղթակից Մակեդոնի մի հետաքրքիր յօդուած է տպագրել Պորտ Սերուրի մասին: Թղթակիցն ասում է, թէ գնեւրալ Ստէսէլի հաղորդագրութիւնները բոլորովին տարբերվում են իր անձնական գիտողութիւններից ու գործի ուսումնասիրութիւններից: Նրա կարծիքով Պորտ Սերուրի պաշտպանութիւնը երկու էական նպատակ ունէր՝ պահպանել ծովային յենակէտ բարձրական նաւատորմի համար և երկրորդը՝ լուրջ կերպով խանգարել Մարշալ Օյեմայի գործողութիւններին: 203 մետրանոց լրի գրաւումը բանդից մատնանիշ արած նպատակներից առաջինը. ինչ վերաբերում է երկրորդին, պաշտպանութեան իւրաքանչիւր աւելորդ օրը հնարաւորութիւն էր տալիս Կուրպատիկին զգնական զօրքեր ստանալու, այդ պատճառով Ստէսէլը պէտք է պաշտպանէր բերդը մինչև վերջին գնդակը: Դաւը փորձը ցոյց տուեց երազանքներին, որ նպատակայարմար չէ վերակել այն կարտաքին շտերկները, որոնք կատարվում էին օգոստոս և սեպտեմբեր ամիսներին: Նպատակներից վճռել էին սկսել բերդի կանոնաւոր պաշարումը: Անձնատուր լինելու միակ արդարացում կարող է համարվել մարդասիրութիւնը: Տէրա է հիւանդների և վերաւորների դրութիւնը սարսափելի էր, բայց կոմիտէի նպատակաւորութիւններ ունի ոչ թէ մեռածների և անողնների, այլ հայրենիքի վերաբերմամբ: Յօդուածի վերջում Մակեդոնի ասում է, թէ պատմութիւնը կը կարգայ Ստէսէլի դատաւիճիչ և անկասկած կերպով կը վճռէ, որ Պորտ Սերուրի անձնատուր լինելը առնուազը վաղաժամ էր: Ինչ էլ որ լինի պատմութեան դատաւիճիչը, այնու ամենայնիւ տպաւորութիւնն այն է, որ Պորտ Սերուրի վերջին օրերը սակաւ փառահեղ էին, քան թէ առաջին օրերը, որ խնդրեց անձնատուր: Եղել միայն բերդի պաշտպանութեան հրամարմատը, բայց ոչ զօրքը:

ԲԵՆԼՍՏՈՆ: Բաղադրյալ խորհուրդը ընտրեց մի մասնագործ, որը կազմելու է ուղերձ թագաւոր Կայսրի անունով փետրվարի 18-ի հրովարտելի առիթով և մի խնդրակիւր Հիւսիս-արեւմտեան երկրի կարիքների մասին:

ԽՐԻՍՏԻԱՆԱ: Անագին բազմութիւնը դիմաւորեց նանդին, որ վերադարձաւ դէպի Լոնդոն կատարած ճանապարհորդութիւնից: Նանդին կատարած ճանապարհորդութիւնից:

մէնը ասաց, որ նա խնդրակցել է անգլիացի քաղաքագետների հետ շվեդ-նորվեգիական ընդհարման մասին և համազօրել է, որ Անգլիան Նորվեգիայի կողմն է:

ԲՈՒԴԱՊԷՏ: Առայժմ խօսք անգամ չէ կարող լինել կրիզիսի լուծման մասին: Կայսրը վերադառնում է Վիեննա:

ԽՈՐՀԱՐԴԱՆԵՐ ԱՆԿՐԱՆՈՒՄ ԲԱՆԿԱՆԻ
Հրապարակեցին **ԲԱՆԿԱՆԻ ՏԻՐԱՆԵԱՆ ԻՍՏԱՆԱ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ**

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բժիշկ Ա. Միխայիլով
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթում և վնասերական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. Երեկոյան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի, դիպատան կից: (տ. օ.) 43—80

Պատրաստում
Ե պարագում ենք բոլոր միջնակարգ դպրոցների բոլոր աւարականներից, կարելի է և գրեթե թիւ: Աւելան փողոց, տուն 53, ուսանողներ՝ Հ. և Կ. (կ. հ. կ.) 6—15

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Ա. Յ. Բարսեղյան
Ընդունում է ճեմքի և զոյալի հիւանդութիւններ ունեցողներին առաւօտեան 9—12 ժամը և երեկոյան 5—7 ժամը:

Վերամիջնակարգ փողոց Ս. Մ. Գաբրիելի,
№ 13. III գիմնադարձի կից (կ. հ. հ.) 19—20

Ա. Ս. Ա. Մ. Ն. Բ. Ո. Յ. Փ.
Ս. Գ. Շերմազանյան
Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյան ժամը 3—6: Երեւանի հրապարակ, տուն Արդութեան, լուսանկար Լաւրիանցի բնակարան:

Լոյս է տեսել և վաճառվում է
Խ Ա Փ Ա Կ
«ՀԱՐԿԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ»
Գինը և 40 կոպէկ

Դիմել թիֆլիս «Գուտտենբերգ» գրախանութին: Առնուազը 5 հատ ցանկացողը կարող է դիմել հեղինակին, «Մշակ»-ի խմբագրութիւն:

Թիֆլիսի Կառնեց Ընկերութեան
Կ Օ Մ Ի Տ Ե Տ Ը
որ իր վրա է առել Հեռաւոր Արեւելքում հիւանդանոց շինել կովկասից վերաւոր և հիւանդ գնեւորներին համար, յայտնում է իր անդամներին և այդ գործին համակրողներին, որ ընկերութեան ընդհանուր ժողովները տեղի են ունենում ամեն շաբաթ, կիրակի օրերը, ցերեկվայ ժամը 12-ին, նախադասական դատարանի շէնքում:

Հիւանդանոցի համար
Ն Ո Ւ Ե Ր Ն Ե Ր
Ընդունում է յիշված ընկերութիւնը հետեւեալ անձների մօտ.

Սազարդալ—Պատրիկայի մօտ, Կերմոն-տովսկի փող. սեփ. տուն:
Դաւիթովի մօտ, Կորյայի փող. № 5.
Սեւիկայի մօտ, Կիրայի փող. № 26.
Պետրովսկայի մօտ, Լաւրաւորի փող. № 11, (ժամը 10—12 առաւ.)
Այսովսկայի մօտ, Բարձրակահա № 16, (ժամը 4-ից սկսած):
Չապիկի մօտ, Կիրայի փող., Ամարայի կրտսեղի մօտ (ժամը 3—4):
Ստրեկովի մօտ, Անդրեւսկի փող. № 27 (ժամը 3—4) 5—5

Թարգմանված է և շուտով կը յանձնվի տպագրութեան
Լ. Ն. Տոլսոյի
«ԿՐԵՑՏԵՐԵԱՆ ՍՕՆԱՏ»
Թարգմ. Մ. Մ. Դաւաթեան: 5—5

Կենտրոնական
գրադաւաւանոցում վաճառվում են Աւարականի հետեւեալ աշխատութիւնները.

Սարաֆ, Ողբերգութիւն հինգ արար. Գ. 30 կ.
Շուշան, օպերա երեք արարուածով Գ. 1 ր.
Թուրաւազիկներ, պատկեր, Գ. 10 կ.
Բերսի Առաքել, գինն է 25 կոպէկ.
Փառանքներ, գինն է 30 կոպէկ.
Շինող, պատկեր, գինն է 30 կոպէկ.
Դոն. Եղիկ, վէպ Շիրակցիների կեանքից, 30 կ. և Կարապետ, վէպ հայ կաթողիկոսների կեանքից, գինն է 1 րուբլի.

Երկերի ժողովածու, հատոր Ա. պատկերներ թիւրքաշայի կեանքից, գինն է 1 ր.
Երկերի ժողովածու, հատոր Բ. Վերաւայի գաղտնիքը վէպ թիւրքաշայի արկածներից, Դիմել՝ Вь Тифлисе, Центральной книжной торговлѣ. (հ.) 8—10

ՀԱՅՈՑ ԴԱՄԱՍԻՔԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Արխիսական ընկերութեան բաւոնում
Կիրակի, մարտի 27-ին

Հայոց դրամաբանական ընկերութեան խումբը
ի նպատակով. Արխիսական կը ներկայացնէ առաջին անգամ

Մարկուրեան քարտարանը
գրամա 3 գործ. հեղ. Ֆ. Ֆիլիպպի, Թարգմ. Վանդիլի

Վերջը ԴՕՆ-ԿԱՐԼՈՍ
Երկերի ողբերգութեան երրորդ գործողութիւնը

Մասնակցում է ամբողջ խումբը:
Սկիզբն է ժամը 8-ին երեկոյան:

Տեղերի գները աւելացրած են:
Հետեւեալ ներկայացումը կը կայանայ երեքշաբթի, մարտի 29-ին ի նպատակով. Աղաւթանի—առաջին անգամ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ, գրամա 4 գործ. հեղ. Բարեթի, Թարգ. Ագուլեանի:

Տոմարները ծախվում են Արախտ. ընկ. կատարում առաւօտեան ժ. 10-ից մինչև 2-ը և երեկոյան ժ. 6-ից մինչև 8-ը:

Բեմադրութիւն Յ. Արեւիկան
Հերթապահ անգամ վարչութեան՝ 24, 26, 27 Տեղան Յովհաննիսեան

Լոյս տեսաւ մամուլի տակից
ԱՎՆԱՐԿՆԵՐ ՈՒԴԻՍՅԻ և ՄԱՀ-ՄԵԴԱՎԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ
Գինն է 40 կոպ.

Ճանապարհածախսով 50 կոպ.
Դիմել թիֆլիս «Գուտտենբերգ» գրախանութին, Ս. Ռ. Դոյաթեանին, Ս. Կ. Կաֆիկին, Յ. Միլի-Ջանեանցին (Բեհրութեար փողոց), իսկ Սիմֆերոպոլում (Լրիմ) հեղինակին այսպէս.—Симферополь, священ. Г. Овсепьянъ. 14—15

Կովկասում տպագրական գործով պարսպոդ անձերի փոխադարձ օգնութեան ընկերութիւնը
Այդ ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը կայանաւ է ուրբաթ, մարտի 25-ին, առաւօտեան ժամը 10-ին, Թիֆլիսի քաղաքային դոմայի դահլիճում:

Գնում թեան առարկաներն են.
1) Ընկերութեան հիմնադրութեան համառոտ պատմական տեսութիւնը:
2) Կանոնադրութիւն մշակող յանձնաժողովի առաջարկը անգամ ընդունելու մասին այն անձերին, որոնք մինչև ընդհանուր ժողովը ցանկութիւն են յայտնել լինելու անգամ:
3) Ընկերութեան կանոնադրութեան ընթերցումը և ընկերութեան բացումը:
4) Վարչութեան և վերապատուող յանձնաժողովի անդամների և նրանց կանգնողներին թիւ որոշումը, նշանակում և ընտրութիւնը:
5) Վարչութեան կազմութիւնից ծագող հարցեր:

Անգամ կարելի է նախապէս գրվել և անգամական ընտրութեան տուներ ստանալ. ա) «Тиф. лист.»-ի խմբագրատանը Ս. Կ. Միլայիցի (ժամը 11—4 ը). բ) «Տիւրք. փողոցի» խմբագրութեան մէջ Ա. Գ. Ջաւադարից և գ) քաղաքային կրէդիտային ընկերութեան մէջ Ռ. Ա. Յովհաննիսեանից (ժամը 10—2 ին ցերեկը): (ա. օ.) 2—3

Մի պատանի, որ սովորում է նկարչական ուսումնարանում, նիւթական միջոց չունենալով, ստիպված է թողնել ուսումը. խնդրում է քաղաքային անձանց օգնել իրան, վճարելով իւրաքանչիւր կիսամիակին 2 րուբլի: Հայց է 8 ր. քաղաքամաս Վոզոգոգիօնայա փող. տուն Միքիլայի № 11, Յովհաննէս Պոստանին: հ. շ. կ. 1—3

Թիֆլիսի Նախնական աղետակաւորութեան Պարագլխի պաշտօնականներին, որ մարտի 31-ի առաւօտեան ժամը 11-ին իշխան Կորուլի տանը (Գրեթեօգլխի փող.) կայանալու է նախնային Աղետակաւորութեան արտադարձ ժողով:

Արտադարձ ժողովի գրադուները առարկաներն են. 1) Նախնային աղետակաւորութեան կողմից ՆՈՐԻՆ ԿԱՅՄԵՐԱՎԱՆ ՄԵՏՈՒԹԵԱՆԸ ամենահաւատալ ուղերձ ներկայացնելու մասին:

2) Գնեւել և մշակել միջոցներ հանգստացնելու Թիֆլիսի նախնային երկրագործ ազգաբնակչութիւնը: (կ. շ. օ.) 1—3

Թիֆլիսի Ժողովարանի աւագների ժողովը տեղեկացնում է պ. պ. անդամներին և կանգնողներին, որ նրանց ընտանքների անդամներին կը թողնեն սիրողների ներկայացումներին և ընտանեկան երեկոյներին միայն այն ժամանակ, երբ նրանք ցոյց կը տան այն կոնորմարկաները, որ տրվում է ժողովարանի գրասենեակում ամեն օր երեկոյան 8—11 ժամին: (20, 24 և 27-ին) 2—3

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Բ. Նաւասարդյան
Տեղեկութիւնով Թիֆլիսի ԲՈՍՏՈՎ Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյան:

Բ. Садовая, 136, д. Бакалова. (տ. կ. հ. հ.) 97—100

Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնագործութեան ընկերութեան
ՄՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵՆ, ԿԱՆԱՆՏ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՏ և ԵՐԵՄԵԱՆԵՐԻ
ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրիսողներ ու սանդախներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդր-կովկասի միւս քաղաքներում ՄՄԵՆԱՆԻ վաճառատներում:



Նոր գրվում է ուղղաբար ֆաբրիկայի նշանի վրա:

ԼԵՕՊՈԼԴ ՆԵՅՇԵԼԵՐ
Անկորական տան պահեստում կայ ընտրութեան համար մեծ քանակութեամբ ուսական եւ արտասահմանեան արդիւնագործութեան
ԿԱՂՈՒԵՂԻՆԻ ԱՊՐԱՆԲՆԵՐ
Տէլեֆոն № 346. 81—47 Երեւանի հրապարակի վրա: